իսկ երբ ուզենաս այս կամ այն երկը, այն դէպքում ահագին ժամանակ պիտի կորցնես, որ կարողանաս գտնել կամ իմանաս ում մօտ է։ Գրադարանների կարեւոր հարցերից մէկը նպատակայարմար գրացուցակներ կազմելու խնդիրն է. դա մի այնպիսի աշխատանք է, ուր հեշտ կերպով և պատահական ձեւով գլուխ բերել չի լինի՝ մանաւանդ այնպիսի մատենադարանների համար, ուր կան տասնեակ հազարներով գրքեր։

Մատենադարանը կարեւոր հաստատութիւններից մէկն է և որպէս այդպիսին նա պէտք է ունենայ իր պատրաստած մատենադարանապետը, հսկող վարչութիւնը և ոչ թէ պատահական պաշտօնեայ կամ անհետաքրքիր վարչութիւն. այդ գործի համար բաւական չէ, որ մատենադարանապետը փորձ ունենայ, այլ և հարկաւոր է տեսական պատրաստականութիւն։

Արդ ինչու խստապահանջ և նախանձախնդիր չլինենք դէպի այդ հաստատութիւնների բարեկարգումը։

Եւ.

Էջմիածին

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԸ ՏՕՆԻՈՒՄ Է

Թիֆլիզ, 9-ին փետրուարի

Զորեքշաբթի, փետրուարի 8-ին, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ Հրատարակչական ընկերութեան նախաձեռնութեամբ գումարուած տպագրութեան 400-ամեակը տօնելու երկրորդ ընդհանուր ժողովը, որը շարունակութիւն էր առաջնի և որին հրաւիրուած էին Թիֆլիզի բոլոր հայկական հաստատութիւնների, հիմնարկութիւնների և խմբագրութիւնների ներկայացուցիչները։ Կարդացւեց առաջին ժողովի արձանագրութիւնը և ապա ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշեց անցնել ընտրութիւններին։

Ընտրւեց մի մարմին բաղկացած 15 հոգուց, որոնք Հրատ. ընկ. հետ միացած պիտի մտածեն յոբելեանը տօնելու ձեւի, ժամանակի և այլ կարեւոր հանգամանքների մասին։

Ուրախալի է, որ ընդհանուր ժողովն ևս այդ մեծ, համազգային տօնը կապեց գրական ֆօնդի հետ։

Շատ վաղուց է զգացւում գրական ֆօնդի բացակայութիւնը. տպագրական 400-ամեայ մեծ տօնը նախ և առաջ լինելով գրական՝ ինչպէս շեշտում էին ժողովում խօսողներից շատերը, անպատճառ պիտի գրականութեան հետ կապել.,.

Առաջներում շատ է խօսւել ու գրւել գրական ֆօնդ կազմելու մասին. այժմ անշուշտ այս տօնը մի առիթ կլինի ֆօնդի կազմակերպման համար։

Ապագայում գրական ֆօնդը կարող կլինի իր միջոցներն ու ճիւղերը շատացնել և մի գուցէ մի գեղեցիկ օր հայ ծեր, հիւանդ ու չքաւոր գրողները, մտքի մշակներն ևս կունենան, յանձին գրական ֆօնդի ապրուստի մի վերջին յոյս, մի ապաստարան... Ինչպէս եւրոպական ազգերից շատերը, նոյնպէս և ռուսները ունեն գրական ֆօնդ, որի փայփայողներից ու յառաջադիմութեան նպաստողներից մէկը եղել է նշանաւոր բանաստեղծ Նադսոնը... Երկրորդ ընդհանուր ժողովում կարդացւեց «Մշակ» և «Արօր» թերթերի խմբագրութեան նամակը՝ ուղղած ժողովին. այդ նամակով նրանք յայտնում էին այն միտքը թէ հայկական տպագրութեան 400-ամեակը լրանում է ոչ թէ այս՝ այլ միւս տարի՝ այսինքն 1913 թւին... և եթէ ամենքը ընդունում են որ այս տարի է, «Մշակ»ը ևս կմասնակցի՝ եթէ մի մարմին ընտրւի նորից ստուգելու տպագրութեան տարեթիւը...

Ինչպէս յայտնի է մինչև օրս հայկական տպագրութեան սկիզբը համարւում է 1512 թ.։ Մխիթարեան միաբաններն ևս ընդունում են այդ։ Եւ արդէն արտասահմանում ու այլ տեղերում յոբելեանը տօնելու համար պատրաստութիւններ են տեսնւում։

Վաղուց յայտնի էր, որ տպագրութեան սկիզբը համարւում են 1512 թ. և ինչու «Մշակ»ը այդ ժամանակներում չէր ժխտում և հաստատում, որ այդ սխալ է, այլ ճիշտը 1513 թ. է...

Եւ ինչու «Մշակ»ը այդ սխալը (ընդգծ. իմն է) այժմ է ուղղում... դա ինչպէս տեղիք է տալիս կասկածների, ինկատի ունենալով այն հանգամանքը, որ «Մշակ»ը այս տարի ցանկանում է տօնել իր 40-ամեայ յոբելեանը։

Գրիգոլ